ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ
2. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
3. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱԺԻՆՆԵՐԸ
4. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ
5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
6. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024թ. «Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դասավանդող ուսուցչի կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կառուցվածքը, որտեղ տրվում են հարցերի նկարագրությունը և պատասխանի գնահատման չափանիշները, հարցաթերթիկում ընդգրկված բաժինները, թեստային առաջադրանքներում ընդգրկված նյութը, առաջարկվող գրականության ցանկը, ինչպես նաև պատասխանների ձևաթղթի լրացման կարգը:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթիկը պարունակում է 72 հարց, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 72 միավոր /100%/:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ երեք հիմնական տեսակները.

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ, որոնց յուրաքանչյուր հարցին հետևում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկ պատասխանն է ճիշտ:

   Գնահատման չափանիշը. ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ (1) միավոր, սխալ կամ թերի պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո (0):

   Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

/Օրինակ/

Ո՞ր գեղարվեստական ուղղությանն է պատկանում Ֆ. Շուբերտի ստեղծագործությունը:

1. Կլասիցիզմ
2. Ռոմանտիզմ
3. Բարոկո
4. Իմպրեսիոնիզմ

/Օրինակ/

Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը ըստ նոտագրված օրինակի:



1. Մ. Ռավել. - «Բոլերո»
2. Լ. վան Բեթհովեն – Սիմֆոնիա N9, IV մաս
3. Ֆ. Մենդելսոն - «Երգ առանց խոսքի»
4. Ֆ. Շոպեն - Վալս

2. Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ, որոնց յուրաքանչյուր հարցին հետևում է պատասխանի հինգ տարբերակ, որոնցից երկու պատասխանն է ճիշտ:

Գնահատման չափանիշը. ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ (1) միավոր, սխալ կամ թերի պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են երկու ճիշտ պատասխան, հետևաբար երկուսից պակաս կամ ավել նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո (0):

Առաջադրանքը գնահատվում է զրո (0) նաև մեկ ճիշտ և մեկ սխալ պատասխանի դեպքում:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

/Օրինակ/

Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալի տոնային և աստիճանային մեծությունը:

1) մաք.4 + փ.3 = փքg.7
2) մաք.5 + մ.2 = մ.6
3) փ.3 + մ.3 = փ.6
4) փքg.5 + մ.3 = փ.7
5) մ.3 + մ.3= փքg.5

3. Կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնց ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը պետք է տեղադրել համապատասխան վանդակներում:

Գնահատման չափանիշը. ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ (1) միավոր, սխալ կամ թերի պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել համապատասխան թիվը:

/Օրինակ/

Համապատասխանեցնել ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին:

Ստեղծագործություն	Կոմպոզիտոր
Ա. «Կախարդական սրինգ»	1. Մ. Գլինկա
Բ. «Կարմեն»	2. Լ. վան Բեթհովեն
Գ. «Ռուսլան և Լյուդմիլա»	3. Ժ. Բիզե
Դ. «Ֆիդելիո»	4. Վ. Մոցարտ
	5. Պ. Չայկովսկի
	6. Յ. Հայդն

Ա	Բ	Գ	Դ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Բովանդակային առումով, թեստում ընդգրկված են հետևյալ բաժինները.

ա. Հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործություն;

բ. Հայ և համաշխարհային երաժշտական գրականություն;

գ. Երաժշտության տեսություն:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Թեստային առաջադրանքներում ընդգրկված նյութը կազմված է հանրակրթական դպրոցների «Երաժշտություն» առարկայի ծրագրային նյութի և չափորոշչի հիման վրա։

Առաջարկվող գրականության ցանկը ներկայացված է ըստ թեստերում ընդգրկված բաժինների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ., Տեր-Մարտիրոսյան Տ. - Երաժշտության տարրական տեսություն. «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980 (191 էջ)
2. Աթայան Ռ., Տեր-Մարտիրոսյան Տ. - Երաժշտության տարրական տեսություն. «Ամրոց գրուպ» հրատարակչություն, Երևան, 2006, (176 էջ)
3. Աղասարյան Լ. - Երաժշտական երկերի վերլուծություն. «Նոյ» տպարան, Երևան, 1998 (52 էջ)
4. Բաղդասարյան Մ. - Ռուս երաժշտության պատմություն. «Լուսակն» հրատարակչություն, Երևան, 2022 (442 էջ)
5. Բրուտյան Մ. - Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն. Երևան, 2014 (255 էջ)
6. Գալացկայա Վ. – Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն. հ.1, «Էդիտ պրինտ» հրատարակչություն, Երևան, 2021 (344 էջ)
7. Գալացկայա Վ. – Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն. հ.3, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1976 (694 էջ)
8. Գևորգյան Ա., Մելիքսեթյան Գ., Բաղդասարյան Ա. - Երաժշտություն 2-րդ դասարան. «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2023 (124 էջ)
9. Գևորգյան Ա., Մելիքսեթյան Գ., Բաղդասարյան Ա. - Երաժշտություն 5-րդ դասարան. «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2023 (124 էջ)
10. Դերոյան Ն. - Երաժշտական ստեղծագործության վերլուծություն. «Լույս» հրատարակչություն, Երևան, 1985 (304 էջ).
11. Երաժշտական տերմինների համառոտ բառարան, կազմեց Վ. Գասպարյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1975 (60 էջ)
12. Լեվիկ Բ. - Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն. «Լույս» հրատարակչություն, հ.2, Երևան, 1974 (281 էջ)
13. Լեվիկ Բ. - Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն. «Լույս» հրատարակչություն, հ.4, Երևան, 2021 (496 էջ)

14. Լեվիկ Բ. - Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն. «Լույս» հրատարակչություն, հ.5, Երևան, 1984 (366 էջ)
15. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն. կազմեց Գ. Մելիքսեթյանը. Հեղինակային հրատարակություն, Երևան, 2022 (106 էջ)
16. Հարությունյան Ա. - Սոլֆեջիո. Հեղինակային հրատարակություն, Երևան, 2023 (72 էջ)
17. Հարությունյան Մ., Բարսամյան Ա. - Հայ երաժշտության պատմություն (հնագույն շրջանից մինչ մեր օրերը). «Նոր դպրոց» հրատարակչություն, Երևան, 1996 (368 էջ)
18. Մելիքսեթյան Գ. - Պոլիֆոնիա. Հեղինակային հրատարակություն, Երևան, 2022 (78 էջ)
19. Մելիք-Վրթանեսյան Կ., Տոնյան Մ. – Երաժշտական բացատրական բառարան, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (256 էջ)
20. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա.- Երաժշտություն 2-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2023 (96 էջ)
21. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա. - Երաժշտություն 3-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն Երևան, 2019 (96 էջ)
22. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա. - Երաժշտություն 4-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն Երևան, 2020 (96 էջ)
23. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա. - Երաժշտություն 5-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն Երևան, 2023 (104 էջ)
24. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա. - Երաժշտություն 6-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն Երևան, 2021 (63 էջ)
25. Շախկուլյան Տ. – Երաժշտություն 7-րդ դասարան. «Զանգակ» հրատարակչություն Երևան, 2023 (120 էջ)

26. Տեր-Ղազարյան Զ. – Արևմտաեվրոպական երաժշտության պատմություն: /Հին աշխարհից մինչև XIX դար/: Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, (544 էջ)
27. Музыкальная энциклопедия в 6-и томах. Изд. Сов энциклопедия. 1973-1982
28. "Музыкальные жанры". Изд "Музыка" М, 1968

Ծանոթություն. գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Վերջնական և վավեր է համարվում միայն պատասխանների ձևաթուղթը:

Ձևաթղթում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

Ջնջումներով պատասխանների ձևաթուղթը համարվում է անվավեր: